




մանաւանդ Սահակ Պատր. Խապայեանի պատրոյ-  
խարութեան շրջանին:

Սոյն ցանկի հրատարակութեամբ կ'ուզենք  
մոռացութենէ փրկել մեր եղերաբախտ ազգակից-  
ներու անունները, կոչ ընել հայորդիներուն որ  
փորձեն այդ անուններուն մէջ գտնել իրենց  
հարազատները եւ շառաչուն ապտակ մը հասցնեն  
թուրք ու այլազգի այն կեղծ պատմաբաններու  
երեսին, որոնք լկտիաբար Օսմանեան կայս-  
րութեան հայ քաղաքացիները կը ներկայացնեն  
որպէս օտարի գործակալ եւ կամ թուրք կոնակէն  
հարուածելու պատրաստուող «կեաւոր»:



Երուսաղէմ, Եղեռնի յուշարձան

## ՇԱՐԱԿԱՆ ՍՐԲՈՅՆ ՍԱՐԳՍԻ ԶՕՐԱՎԱՐԻՆ

Ամենասուրբ երրորդութեանն  
ընտրեալ ծառայ եւ հաւատարիմ  
սպառազէն եւ քաջ նահատակ.  
երազահաս սուրբը Սարգիս շնորհաց  
օրեան, քարեխօս լեր առ Քրիստոս  
վասն անձանց մերոց:

Թագաւորին երկնաւորի սուրբ զօրապետ  
եւ մենամարտիկ. սիրով անմահին  
խաչեալ յաշխարհի երազահաս սուրբը  
Սարգիս խաչի պըսակեալ. քարեխօս  
լեր առ Քրիստոս վասն անձանց մերոց:

Արեգականն արդարութեան մեծ  
կարապետ պայծառ արուսեակ,  
ցոլացեալ յարեւմըտից ի յելս արեւու  
երազահաս սուրբը Սարգիս անշէջ  
ճառագայթ, քարեխօս լեր առ Քրիստոս  
վասն անձանց մերոց:

Աւետաւոր Հայոց Մեծաց դիմեալ ի մէջ  
երկրի հիւսիսոյ. հողմն հարաւոյ ի դաշտ  
ծաղկածին, երազահաս սուրբը Սարգիս  
տունկ անմահութեան, քարեխօս լեր առ  
Քրիստոս վասն անձանց մերոց:

Խաչաչարչար սուրբ դիտապետ  
նըշանագործ անուամբ ի խաչ եւ  
եկեղեցի. առաւել պայծառ ի գլուխըս  
գագայ ի գագաթան տեղոջն օրհնեալ  
սրբոյն Մարտպայ. երազահաս սուրբը  
Սարգիս քարեխօս լեր առ Քրիստոս եւ  
վասն անձանց մերոց:

